Հ- Ռ-3226 *13 նոյեմբերի, 2025թ.*

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ
Վահագն Հովակիմյանին
hovakimyanV@elections.am cec@elections.am

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի լիազոր ներկայացուցիչ
Փաստաբան Ռուզաննա Ավագիմյանից
rousanna.avaguimian@gmail.com
+374 55 188 806
0038 Երևան, Աբելյան 6/1, 409Ա

Դ Ի Մ Ում

Հարգելի՛ պարոն Հովակիմյան,

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի (անդամ կազմակերպությունների) անունից՝ Ձեզ եմ դիմում հետևյալ հարցի առնչությամբ:

Համաձայն Ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ «Օրենսգիրք») 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝ Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, որոնց կառավարման մարմնի կազմում, բացառությամբ ժողովի, որևէ ներկայացուցիչ չի մասնակցում տվյալ ընտրություններին թեկնածուի կարգավիճակով, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:

Ըստ Օրենսգրքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերության՝

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժում է դիտորդների հավատարմագրման մասին դիմումը, եթե կազմակերպության կանոնադրական նպատակները չեն բավարարում սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները, կամ դիմումը ներկայացվել է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետների խախտմամբ, կամ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման պահանջներին, կամ դիմումը չի պարունակում նշում կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման կամ ուսուցման մասին, կամ տվյալ կազմակերպության կառավարման մարմնի որևէ անդամ, բացառությամբ ժողովի անդամների, մասնակցում է տվյալ ընտրություններին թեկնածուի կարգավիճակով:

Եթե Օրենսգրքի այս հատվածները համադրենք և մեկնաբանենք տառացի, ապա ստացվում է, որ 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները

կումուլյատիվ են, այսինքն՝ դրանք բոլորը միաժամանակ պետք է գոյություն ունենան, որպեսզի հասարակական կազմակերպությունը կամ հիմնադրամը իրավունք ունենա իրականացնելու դիտորդական առաքելություն, մինչդեռ, 31-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է այդ պահանջներից միայն երկուսի (կանոնադրական նպատակների և թեկնածուի կարգավիճակի մասով) չբավարարման հիմքով հավատարմագրման մասին դիմումի մերժման լիազորություն:

Հաշվի առնելով վերը շարադրվածը և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածը՝

խ ն դ ր ում ե ն ք

տալ պաշտոնական պարզաբանում առ այն, թե արդյո՞ք Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է մերժի հասարակական կազմակերպության կամ հիմնադրամի՝ դիտորդության հավատարմագրման դիմումը, եթե այն աջակցում է թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:

Միաժամանակ, նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգին համապատասխան՝

ա ռ ա ջ ա ր կ ում ե ն ք

պաշտոնական պարզաբանումը տալ հետևյալ կերպ՝

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժում է դիտորդների հավատարմագրման մասին դիմումը, եթե «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն տվյալ հասարակական կազմակերպությունը կամ հիմնադրամը չունի դիտորդական առաքելության իրավունք:

Կից ներկայացվում են՝

1. «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ կազմակերպությունների ղեկավարների կողմից տրված լիազորագրերը.
2. «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ կազմակերպությունների պետական գրանցման վկայականների պատճենները.
3. ԱՀՓ և արտոնագրիս պատճենները:

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի
(անդամ կազմակերպությունների) լիազոր ներկայացուցիչ՝

Փաստաբան **Ռուզաննա Ավագիմյան**